Հայտարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՎՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱԿՆԱԼՃԻ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ-Ի ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ /16 ԴԱՍԱԺԱՄ/, ՖՐԱՆՍԵՐԵՆ / 13 ԴԱՍԱԺԱՄ/, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ /12 ԴԱՍԱԺԱՄ/ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ (ԱՂՋԻԿՆԵՐԻ)/8 ԴԱՍԱԺԱՄ/ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

- ✓ Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարի:
- ✓ Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

- ✓ Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:
- ✓ Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 23-ին , ժամը 14:00-ին «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:
- ✓ Տեղեկությունների համար զանգահարել 077-22-77-04 հեռախոսահամարով: